Յաբեթէն՝ նախահօրն մերոյ առաջին թագաւոր տանն Արարատեան 'ի վերայ Հայոց, Հայկա որդւոյ Թորգոմայ, որդւոյ Թերասայ, որդւոյ Գամէրայ, որդւոյ Յաբեթայ, որդւոյ Նոյի Նախիջանօղն 'ի Տապանէն 'ի յերեսս յերկրի Արարատու մինչև վերջին թագաւոր Լէվոն վեցերորդի հանդերձ մարզպանօք համարեցան իբրև մի հարիւր քսան և չորս անձինք, թէ 'ի ցեղէն Հայկա, թէ 'ի Վաղարշակայ, թէ 'ի Բակրատեայ, թէ 'ի Ռոբէնեանց և այլ զանազան ազգից մարզպանաց, նաև այս միջոցաւս երևեցաւ 'ի մէջ աշխարհին մերոյ հաւատարիմք յաղթօղք իշխանք Հայոց նշանաւորք անձինք բազումք, որպէս Գինունիք, Արծրունիք, Մամկոնացիք, Յորբէլեանք և այլք բազումք, որում յատկութիւնն պատմէ ձեզ Մովսէս Խորենացի անկեղծ պատմիչն, այլ ամենեքեան սոքայ ջանալով ընթացան 'ի գործս իշխանութեան 'ի վերայ տանն Հայոց, այնքան որում գիտութիւն և կարողութիւնն իւրեանց կարէր խոստանալ նոցայ, որ այժմոյս կարօղեմք խոստովանիլ, զի բազումք 'ի նոցանէ ունին երախտիք և արդիւնք 'ի վերայ տանն Հայոց, 'ի պատճառս բարեգործութեանց իւրեանց, և բազումք 'ի պատճառն խելագարութեան իւրեանց թուլացան և անկան և եղեն պատճառ բազում փլասու 'ի վերայ տանն Հայոց։